



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2945



016.9  
1469  
Հ-35

Բ. Մ. ՀԱՐԴՈՒԵՎՆԸ

# ԽՈԼԵՐԻ ՄԱՍԻՆ

(33)

(ԱՐՏՈՒՐ 1892 Թ. •ԱՐԱՐԱՏ. ԱՄՍԱԳՐԻՑ):

ՎԱՂԱՐՃԱԿԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒՔ ՏՊԱՐԱՆՈՒՄ

1892

2010

ԲԺ. Ա. ԶԱՐԳԱՐԵԱՆՑ.

610  
80-24

616.9  
9-35 ԿՀ

# ԽՈԼԵՐԻ ՄԱՍԻՆ

1003  
10135



(ԱՐՏԱՏԱԳՐԸ 1892 թ. «ԱՐՄԱՆԱ» ԱՄՍԱԳՐԻՑ):

2002

ՎԱԴԱՐՃԱՎԱՏ

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ

1892

16505

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ  
Ա Մ Ե Ն . Տ . Տ Ե Ղ Ա Կ Ո Լ Ի

Հ Ա Յ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ա Յ Ա Յ :

Խ Օ Լ Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն

Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ:

Այն հիւանդութիւնը, որը այժմ վտանգ է սպառնում մեր երկրին առկական խօևեն է, որը՝ համաճարակ լինելով՝ իւր երեան գալութ՝ շատ զոհեր է տարել մարդկութիւնից. բայց նրա մօտիկ ուսումնասիրութիւնը՝ կարծես թէ՝ մօտ ապագայում ողետք է վերջ դնէ նրա վտանգաւոր լինելուն:

Ինչու համար խօլերը կոչվումէ ասիական: Այս նրա համար է, որովհեաւ՝ նախ՝ այս ցաւի ծննդատեղը Ասիական Հնդկաստանն է, երկրորդ՝ կայ և՝ այսպէս առած՝ մեր խօլեր (cholera nostras) հիւանդութիւնը, որը նման լինելով նոյն յատկութիւնը չունի:

Ասիական խօլերը բարակ աղեքների լորձնաթաղանթի առանձին տեսակի սուր բորբոքումն է, որին միանումեն և վարկուածութեան երեսոյթներ, որոնք գլխաւորապէս հարուածում են առաջին կարգում նեարգային համակարգութիւնը:

Խօլերի երեսոյթները որոշ կարգով են արտայայտվում, որով իրաւունք ենք ստանում հիւանդութիւնը բաժանել ջոկ ջոկ ջաների: Բացի սրանից այս երեսոյթները առանձին գիպուածներում տարբեր խմբակցութիւն կազմելով, ներկայացնումեն հիւանդութեան ընթացքի զանազան պատկերներ:

Ակզենտական շրջանում գլխաւոր երեսոյթներն են ստանոքսի և աղիքների երեսոյթները:

Երկրորդ շրջանում՝ հարուածվումէ գլխաւորապէս նեարդային համակարգութիւնը։ Այս այն շրջանն է, երբ հիւանդութիւնը հասնումէ իւր գագաթնակէտին։

Երրորդ շրջանով՝ հիւանդութիւնը վերջանումէ։

Բ.

Հիւանդութեան Նկարագրութիւնը.

Եթէ մի մարդ հիւանդանումէ մեր աչքի առաջ, մենք նկատում ենք, որ հիւանդացողը շ, 3 օր տկար է զգում իւրեան ընդհանրապէս։ սակայն այս հանգամանքը մեր աչքից փախչումէ, մանաւանդ եթէ սովոր չենք մի որ է հիւանդութեան նշանակները ժողովել և դասաւորել նրանց գտնելով նրանց մէջ ներքին կապ։

Մինդեռ հիւանդը իւրեան անհամապատասխան թոյլ է զգում, քանի որ գեռ ուրիշ մի բան չկայ, մեր ուշադրութիւնը գրաւումէ, երբ երեան է գալիս խօլերի կոյշը փորլուծութիւնը։

Մեզ թուումէ թէ՝ չենց սրանով է սկսում հիւանդութիւնը։ գուրս գնալը (հարկաւորութիւն) ամեն դիպուածում միաչափ է։ ընդհանրապէս սկզբում օրը 3 կամ 4 անգամէ գուրս տանում։ երկար միջոց անցնելուց յետոյ այս կրկնվումէ։ Կոյշի հետ միասին պատահումէ՝ թէւ ոչ միշտ՝ և փսխիլ, որ յաճախ առաջին շրջանի սկզբումն է լինում։ քան վերջում։ Եթէ հարկաւորութիւն գնալը շուտ շուտ է լինում, կղկղանքը խաշած բրնձի ջրի գոյն է ստանում։

Օրուայ ընթացքում զանազան քանակութիւնով կղկղանք է գուրս բերվում։ Քանի՛ անգամէ գուրս տանում, այդ էլ տարբեր է լինում։ Կոյշը առաջի շրջանից 3, 4, 6 նաև 7 օր առաջ է յայտնիվում։ բայց պատահումէ, որ կոյշը երեան է գալիս առաջի շրջանի վերջումը։ Սրտի գդալի տակ զգացվումէ ծանրութիւն և ճնշողութիւն, երբեմն ցաւ է տալիս։ փորն էլ գոգուումէ, որովհետեւ աղիքներում շատ ջուր և գաղեր են շարժվում։

Երբ գալիս է այն ժամանակը, որ յանկարծ մեծ քանտիւութիւնով կղկղանք է գուրս բերվում, որ յետոյ իրար ետևեից յաճախ կրկնվումէ, այս երկրորդ շրջանն է, որ ասվումէ և սառած շրջան։ մինչդեռ՝ ընդհանրակառակը՝ առաջին շրջանում՝ ինչպէս վերը յիշեցինք՝ ամեն հարկաւորութիւն տանելուց երկար միջոց է անցնում մինչև միւրը, և այնքան տռատ չեն արտաթորութիւնները։ Խսկ սառած շրջանում շուտ շուտ և առատ գուրս է տանում։ լինումէ և փսխիլ։

Յետոյ մարմինը սառչումէ գրաից, կապտումէ, մորթին կնճռոտումէ, աչքերը խորն են լինենում։ Գիտակցութիւնը թէւ շէ կորչում՝ բայց սաստիկ անզօրութիւն է նկատվում։ Զայնը խզրդվումէ, գրեթէ կտրվումէ, մեզը կապվումէ, մկանունքները կծկվում են՝ յառաջանում են ցնցումներ, որ՝ երկար ժամանակ արանք տալով կրկնվումէ։ Ծնչառութիւնը արագանումէ, հասնումէ, մինչեւ անգամ սաստիկ շնչարգելութեան։ Սառած շրջանը մի օրում հասնումէ իւր բարձր կէտին։ Այս դրսութիւնը կարող է տեել շ կամ 4 օր՝ եթէ բժշկականութիւնը կարողանումէ կուել հիւանդութեան դէմ՝ որքան կարելին է։ Բայց յաճախ այս շրջանում հիւանդները շնչառալառութիւնից կամ նուազութիւնից պակասում են։

Սակայն բարեյանդ դիպուածներում, երբ՝ իւր ժամանակին՝ հիւանդին հասցրած օգնութիւնը անօգուտ չէ կորչում, սառած վիճակը թուլանումէ կամաց կամաց, սկսումէ երրորդ շրջանը, տաքութիւնը վերականգնուումէ, և արինի շրջագարձութիւնը կանոնաւորուումէ։ Ճայնը և մեզը բացում են շատ շուտով։ և այս լինումէ այն ժամանակի երբ գեռ հիւանդը ջուր չէ խմել բաւարար քանակութիւնով։

Արտիստիկ ընդհանուր տեսարանը փոխվումէ կարճ ժամանակում մեր աչքի առաջ։ Այս ցոյց է տալիս, որ հիւանդութիւնը վերջանալու վրայ է։ տաքութիւնը տատանւումէ 37 ու 38 աստիճանի մէջ, հազիւ կպատահի սրանից բարձրանալ։

Ախորժակը լաւանումէ, աղիքները կանոնաւորվում են և 6—8 օրից յետոյ մեր հիւանդը առողջանումէ։

Երրորդ շրջանը տեսումէ 6 կամ 8 օր, այնպէս որ վրայ 10—  
11-րդ օրը հիւանդը առողջացած է լինում: Այսպէս է ընթա-  
նում խօլերը իւր տիպային ձևով:

Մէ ս-րէլը հիւանդանումէ այլ եղանակով՝ խօլերով ճարա-  
կուածի կոյշը սկսումէ կէս գիշերին. Յ, 4 կամ ես աւելի ան-  
գամէ պատահում գուրս գնալը. կղկղանքի գոյնը կանաչաւուն  
է, եթէ վերջինս առատ է, գունատ է լինում: գուրս գնալուց  
առաջ փորը գոգուումէ. մէզը չէ կապիւմ: Կոյշը աեռմ է  
1, 2 կամ 3 շաբաթ. ախորժակը վատ է, ծարաւը սաստիկ:  
Այս երեսյթներով շատ նման է ստամոքսի հասարակ խանդա-  
րումներին. միայն մի բան, որ նկատումէ այստեղ՝ այդ հի-  
ւանդի սաստիկ թուլութիւնն է, որը կապ չունի կոյշի հետ,  
որովհետեւ հասարակ փորլուծութիւնը այնքան չէ թուլացնում  
այդքան կարծ ժամանակում:

Մէ երրորդ հիւանդ ներկայացնումէ մի այլ պատկեր՝ առաջին  
շրջանում կամ լինումէ թեթև կոյշ կամ չէ լինում: բայց հի-  
ւանդը զգումէ թուլութիւն, գլխի պտոյտ և ականջներում  
խշխցոց: Երկրորդ շրջանում եթէ կոյշը եղել է, շարունակւում  
է սաստկանալ, իսկ եթէ չէ եղել սկսումէ գիշերը, և այն էլ  
միանդամից, մեծ քանակութիւնով, փորացաւով. հիւանդը փոր-  
խումէ: Շատ անգամ նկատումէ սաստիկ՝ ծարաւութիւն, ա-  
խորժակի կորուստ ընդհանուր թուլութիւն, ցնցումներ, տա-  
քութիւնը նուազումէ, բայց և այնպէս սաստածութեան չէ հաս-  
նում: մէզը քիշանումէ բայց չէ կտրւում: Երկրորդ շրջանը այս  
դիպուածում տեսումէ մի օր, որից յետոյ հիւանդը անմիջա-  
պէս սկսումէ լաւանալ: Փախիլը և կոյշը դադարումեն, թու-  
լութիւնը անցնումէ և մարմնու տաքութիւնը կանոնաւուում.  
մի քանի օրից յետոյ հիւանդը դրաւուումէ՝ մնումէ մի փոքր  
թուլութիւն, որը մի քանի ժամանակից յետոյ անհետա-  
նումէ:

Չորրորդ հիւանդը տկարանումէ՝ այսպէս առած՝ չոր խօլերով,  
որը իւր անունը ստանումէ նրանից, որ աղիքներում շատ քիչ  
հեղուկ է լինում հաւաքուած, կամ բնաւ չէ լինում: իսկ հի-

ւանդը թուլութիւն է զգում: ախորժակը կորցնումէ, անհան-  
գըստութիւն է զգում:

Հինգերրորդ դէպքում հիւանդութիւնը այնպէս արագ է ընթա-  
նում: որ աննկատելի է գառնում շրջանների բաժանութիւնը: Այս-  
տեղ աչքի է ընկնում աւելի սասափկ շնչարգելութիւնը ընդհա-  
նուր թուլութիւնը, ցնցումները և պաղելը: Երկու երեք կամ  
տասներկու ժամուայ ընթացքում հիւանդը աւանդում է իւր  
հոգին: Այս տեսակը կոչւում է կայծակնատիպ խօլեր. որ և  
ամենածանր տեսակն է. սակայն՝ բարեբաղդաբար՝ յանախ չէ  
պատահում:

## Գ.

ՍԻ ՔԱՆԱ ԵՐԵՒԱՌՑԹՆԵՐԻ ՄԵԿՆԱԽԹԻՒՆԻ.

Թէ ինչից է կախուած տաքութեան նուազումը, արիւնի շրջ-  
ջագարձութեան գանդաղումը և մեզարգելութիւնը:

Մենք տեսանք, որ խօլերով հիւանդը սառչում է. ուրեմն  
մարմնու տաքութիւնը իջնումէ, նուազումէ: Եթէ չերմաչափը  
զնենք կւնատակին և թողնենք մնայ քառորդ ժամ: կտեսնենք  
որ տաքութիւնը իջել է մինչեւ 34:5 և 35:5 աստիճան (կա-  
նոնաւորը 37:4 է): Եթէ մի ուրիշ չերմաչափ՝ միենոյն ժամա-  
նակ՝ զնենք վարազաղիքում և թողնենք մնայ քառորդ ժամ:  
Չերմաչափը ցոյց կտայ 42 աստիճան: Սրանից հետեւումէ, որ՝  
այն ինչ մարմնու երեսի տաքութիւնը պակասումէ, ներսի տա-  
քութիւնը աւելանումէ: Ի՞նչից է յառաջանում այս ասումեն  
թէ՝ շատ ջուր կորցնելուցն է: Բայց այս սխալէ որպէս մի-  
ենոյնը պատահումէ և այն ժամանակ, երբ հիւանդը քիչ ջուր  
է կորցնում: այսինքն կոյշը սաստիկ չէ. կամ բոլորովին ջուր չէ  
կորցնում ինչպէս այս լինումէ որ խօլերի ժամանակ: Եթէ  
մարմնու երեսի ապքութեան նուազիլը կախուած լինէր ջուր  
կորցնելու քանակութիւնից, այն ժամանակ ներսի տաքութիւնը  
նոյնպէս նուազ կլինէր. մինչգեռ վերջինս աւելացած է: Այստե-

զից հետեւումէ, որ ներսում արիւնը կանոնաւոր կերպով է խաղում, և որովհետեւ չէ կարելի ենթագրել, որ արիւնի թանձրութիւնը զանազան գործարաններում տարբեր լինի. ուստի չէ կարելի թոյլ տալ, որ սառնութիւնը թանձրութեան աստիճանի փոփոխումի հետեւանքն լինի:

Բացի սրանից պատահումէ տեսնել որ նրանք, որոնք վախճանուել են սառած շրջանում, մահից յետոյ մարմնու տաքութիւնը աւելացած է լինում: այս բանը չէր կարող պատահել եթէ սառչելը կախուած լինէր շատ ջուր և ջուտ կորցնելուց:

Վերջապէս՝ երբ հիւանդը սկսումէ գէպի լաւը գնալ, երբ սառած շրջանը անհետանումէ երկու, երեք ժամնւմն և երբ գեռ մի կաթիլ հեղուկ չէ մոցրուած մարմնու մէջ, ջրի կորուսոր լրացնելու համար տաքութիւնը բարձրանումէ, այնպէս, որ ջերմութեան խանգարումները ջրի կորսոի և արիւնի թանձրանալու հետեւանքը չէ կարող լինել, քանի որ կորուսոր լրացրած չէ: Այս խանգարումները արիւնի շրջագարձութեան տեղական փոփոխումներիցն է: իսկ սրանց պատճառը անօթային նէարդարժական խանդարումնէն (էն 1):

Միւս երեւյնթը՝ խօլերից յառաջացած խանգարումների շարքում՝ արիւնի շրջագարձութեան դանդաղելն է, որ քանի գընում սաստկանումէ. սրա ապացոյցը այն է, որ մարմինը պազումէ զրսից և կապտումէ: Արիւնի հոսանքի այս դանդաղումը նոյնպէս կախուած չէ ջրային մասերի կորուսոից և հետեւաբար արիւնի թանձրութիւնից, որովհետեւ հէնց որ սառած

1) Այստեղ պէտք ենք համարում յիշել որ արիւնը մարմնու մէջ բաշխումէ խողովակների միջցով, որոնք ասւումեն անօթներ. այս անօթները ընդունակութիւն ունին լայնանալու և նեղանալու, որը կախուած է նեարդների գրգիռներից, և այն գործողութիւնը, որով անօթը լայնանումէ և նեղանում նեարդների ազդեցութեան տակ, կոչւումէ նեարդաշարժութիւն կամ նեարդաշարժական գործողութիւն. իսկ անօթների նեարդերից կախուած խանգարումները կոչւումեն նեարդաշարժական խանգարումներ:

շրջանը անցնումէ, իսկայն մարմնու մակերևոյթի վերայ արիւնի հոսանքը արագանումէ, և այս լինումէ կարճ ժամանակամիջոցում: երբ արիւնի թանձրութիւնը նուազեցնող նոր պայմաններ չեն ծննում: Այսուղ էլ արիւնի շրջագարձութեան խանգարումները յառաջանումէն անօթների նեարդաշարժութեան փոփոխումից: Թէ ինչպէս անօթների նեարդաշարժութեան փոփոխումը կարող է գանգաղացնել կամ արագացնել արիւնի հոսանքը, այդ փորձով գիտէ ամեն ոք, որ ուրախութիւնից հոգու զիւրութիւն, իսկ տիսրութիւնից ձնշողութիւն կամ սրտնեղութիւն է զգում: առաջի գէպքում մեր բազկերակի հրոյթը (պուլ'սը) յաճախումէ և մեր երեսի գոյնը կարմրում: երկրորդ գէպքում՝ գանգաղումէ և երեսի գոյնը սպրզնում՝ կապուում: Խօլերուի սիրալ լայնանումէ: Արիւնի մէջ ուրիշ ապացուցած փոփոխութիւններ չկան, բայց քիչ թէ շատ թանձրութիւնից, որ կախումն ունի ջրային մասերի համապատասխան կորուսոից:

Երրորդ երեսյթը, որ փափոխութեան է ենթարկում: այդ միգաթորութիւնն է: Ինչպէս վերև նկարագրեցինք՝ առաջի շրջանում մէզը նուազումէ, իսկ երկրորդում՝ երբ հիւանդը լինում է սառած շրջանի մէջ, բոլորովին կապւումէ: Որովհետեւ բոլոր համաճարակումների ժամանակի բոլոր երկրներում՝ բժշկները նկատել են, որ սառած վիճակը վերջանալուն պէս երբ գեռ մի կաթիլ ջուր չէ մոցրւած մարմնու մէջ, արիւնի ջրային մասերի կորուսոր լրացնելու և սրանով թանձրութիւն նուազեցնելու, միզելը վերականգնվումէ, ուստի արիւնի թանձրութիւնը. կամ նրա հոսանքի գանգաղումը պատճառ չեն կարող լինել միզակապութեան: Մանաւանդ ներսի գործարաններում՝ արիւնի շարժողութիւնը շարունակւումէ, և այն էլ այնքան ուժով, որ ներսի տաքութիւնը բարձրանումէ 0, ուստի անհրաժեշտ է ենթագրել, որ ձնշողութիւնը երակներում այնքան փոքր չէ, որ մեզարգելութիւն պատճառէ կամ փաստեր, որոնք թոյլ են տալիս մեզ ընդունել թէ մեզարգելութիւնը յառաջ է գալիս նեարդաշարժական խանգարումներից երիկամների մէջ: Մանաւանդ՝ եթէ ուշ գարձնենք այն հանգամանքի վերայ, որ միզելու

կարողութիւնը վերականգնումէ միանգամից, յանկարծ, երբ  
մարմնու գոյնը փօխումէ հիւանդը սկսումէ թեթևութիւն  
զգալ: Այսպէս շուտ կարող է փօխուի միայն նեարդային երե-  
ւոյթը:

Պ:

ԽօԼԵԲԸ ԻՆՉԻՑ Է ՅԱՌԱՋԱՆՈՒՄ:

Ս Թ Ո Ր Ա Կ Է Տ Ա Ն Մ Ա Ն Բ Ա Գ Ի Լ Ը.

Այժմ՝ երբ գիտենք՝ թէ խօլերը ինչ արտաքին կերպարանք  
ունի, հարկաւոր է իմանալ նրա էռութիւնը: Այս հարցի վերա-  
բերութեամբ Պաշինին (Ֆլորենցիայից) առաջինն եղաւ, որ յայտ-  
նեց՝ թէ խօլերի բուն պատճառը է մի առանձին յատկութիւն  
ունեցող բացիկ (1). և այսպիսով զրդեց գիտնականներին այս  
ուղղութեամբ ընթանալ խօլերի վերաբերեալ հարցում: Պաշի-  
նին չկարողացաւ գտնել խօլերի բացիլ: Այս բացիլի գտնելու-  
մը մենք պարտական ենք բերլինի պրօֆեսոր Կօխին: Վերջինս  
գերմանական կառավարութեան կարգադրութիւնով գնաց Հընդ-  
կաստան խօլերը հետազոտելու իւր ծննդալայրում: Կօխը եր-  
կար աշխատութիւններից յետոյ եկաւ այն եզրակացութեան,  
որ աղիքների արտաթորութիւններում գտաւ մի տեսակ բացիլ  
որը անուանեց կօմմաբացիկ, այսինքն ստորակէտանման բացիլ.  
այս բացիլի հաստութիւնը, երկարութիւնը և լայնութիւնը որո-

(1) Այժմեան դարում ենթագրումեն, որ բոլոր վարակիչ հիւանդու-  
թիւնները յառաջանումեն մանրակազմ մարմիններից, որոնց միայն ման-  
րադիտակով կարելի է տեսնել, և որոնք՝ զանազան պատկերներ ներկա-  
յացնելով՝ կոչվումեն վիրիտներ, բակտիրներ, բացիլներ, սպիրիլներ և  
այլն: Պրօֆեսոր Շարիւմակելը՝ ենթագրումէ, որ նեարդային հիւանդու-  
թիւնների մի որոշ մասը իւրեան ծագումով նոյնպէս պարտական է ման-  
րակազմների աշխարհին պատկանող գոյակներին: Այս մանրակազմների  
տեսութիւնը զննվումէ առանձին գիտութեան մէջ, որ ասւում է բա կ-  
առ բա առ ու թիւն:

շելը դժուար էր, ճայելով որ Կօխը շատ անգամ կրկին և կըր-  
կին չափել է. բայց համեմատելով թոքախտի բացիլի հետ նա  
գտել է, որ խօլերի բացիլը հաւասար է թոքախտի բացիլի կէ-  
սին կամ երկու երրորդին. բայց հաստ է և մի փոքր ծռուած,  
և այս կորութիւնը մեր ստորակէտի կամ գերմանական կօմմա-  
նշանի պէս է. և այս պատճառով ստորակէտանման բացիլ ա-  
նուն ստացաւ: Այս բացիլները գտնուած են եղել բացառապէս  
աղիքների արտաթորութիւններում: աղիքների պատերում և  
գեղձերում: բայց արիւնի մէջ և ներքին գործարաններում եր-  
բէք չեն գտնուել: Սրանից յետոյ Կօխը համոզուել է, որ ստո-  
րակէտանման բացիլը խօլեր յառաջացնող մանրակազմըն է:

Այսիցն գտնուեցան ուսումնականներ և այն էլ հռչակ ունե-  
ցողներ, որոնք սկզբում համամիտ չէին Կօխի հետ, յառաջ բե-  
րելով այն վաստա՞ր՝ թէ ստորակէտի նման բացիլներ կան ուրիշ  
հիւանդութիւններում: Բայց Կօխը ցոյց տուեց, որ իւր գտած  
բացիլը իւրեան աճելու եղանակովը զանազանուումէ համանման  
բացիլներից. բայց որ աւելի ապացուցութիւն ունի, այդ պա-  
տուաստելն է:

Առաջի պատուաստումը արել է Նիկատին Մարսէլում: յետոյ  
ջէկին իտալիայում: Սրանից յետոյ Կօխը բերլինի կայսերական  
առողջապահական խորհրդում ներկայ եղողներին ցոյց տուեց  
տասն և չորս ճագար, որոնց պատուաստել էր խօլերը: Այս  
ճագարները պատկերացնուումէին խօլերի բոլոր գլխաւոր երեսոյթ-  
ները. այնպէս որ այս վճռական իրողութիւնից յետոյ Կօխի  
հակառակորդները ստիպուած էին ընդունել Կօխի ստորակէ-  
տանման բացիլը իբրև Խօլերածին բացիլ: Բացի սրանից այս պա-  
տուաստում հաստատեց և խօլերի վարակիչ լինելը. այսինքն  
վարակող տարրը՝ մանելով մարգու աղենելը<sup>9</sup> բազմանուումէ և ե-  
թէ այստեղից գուրս գալով՝ մտնուումէ մի ուրիշ մարգու աղիք-  
ներ, բազմանուումէ և այնտեղ յառաջացնուումէ նոյն հիւանդու-  
թիւնը, ինչ որ ունեցել է առաջի մարդը:

Այստեղ հարկաւոր է ցոյց աալ թէ ինչ պայմաններ նպաս-  
տումեն այս բացիլի զարգանալուն և արգելք են լինում:

Ստորակէտանման բացիլի զարգանալու և բազմանալու համար հարկաւոր է անպատճառ խոնաւութիւն, խոնաւութեան նուազումը դանդաղեցնումէ զարգանալը. խոնաւութեան հետ միասին այն միջոցը, որի մէջ ապրել է այս բացիլը. պէտք է շարային լինի, որովհետեւ աղիքների արտաթորութիւնները որի մէջ բազմանումէ նոյնպէս չը բնայի ունի; Ոտորակէտանման բացիլը կամ՝ որ՝ և միենոյն է խօլերացին սաղմը Յ ժամ կաց-նէր-ց յետոյ անվնաս է դառնում: Թե՛ս- հէղա-կնէրէ մէջ բացիլ-ները ոչնչանումեն 10 րօպէում: Նէինը հայ հոգելը խանգա-րումէ բացիլների ամեյուն:

**b.** *Thomomys* *fuscus* *fuscus* *fuscus*

ԻՆՉՊԵՍ է ՃԱՐԱԿԻՈՒՄ ՄԻ ԵՐԿԻՔ ԿԱՄ ՔԱՂԱՔ. ԻՆՉՊԵՍ ՎԱՐԱԿԻՈՒՄ ՄԻ ԱՆՀՈՏ.

Ծանօթանալով խօլերածին բացիլին, մենք իմացանք, որ տռանց նրա խօլեր ախար չէ կարող յառաջանալ: Բայց ինչպէս է պատահում որ մի ամբողջ երկիր ձարակւումէ. և ինչ եղանակով վարակւումէ մի առանձին անհատ:

Այժմեան գիտութեան համաձայն՝ մենք կարող ենք ասել թէ՝  
նախ՝ մ երիշ ճարակ-ելու համար հայկա-ու է, ո՞ այնպէս բեր-ած  
վէն հէ-անդու-նւան առաջը. երկրորդ՝ այս սաղմը իւր զարգանա-  
լու և ապրելու համար այդ տեղում պէտք է ունենայ յարմար  
պայմաններ. և երրորդ՝ այդտեղ հարկաւոր են բարեյածող պայ-  
մաններ յարակութիւնը տարածելու համար:

Խօլերային սաղմբ մի տեղ կարող է բերւած լինել մի մարդու միջնոցով, որ ինքը հիւանդ է և արտաթորումէ ազիքներից սաղմբ պարունակող նիւթեր. կամ մարդ ինքը առողջ է, բայց իւր հետ բերումէ այնպիսի իրեղեններ, որոնք ապականւած են վարականիւթով. և կամ առուտուրի առարկաների միջնոցով, որոնց կպած է վարականիւթը:

Սակայն մի երկիր համաճարակելու համար դեռ ևս բաւական,

չէ որ այդտեղ բերւած լինի խօլերային սաղմը, այլ հարկաւոր է, որ այդտեղ նպաստաւոր հանգամանքներ լինին նրա աճելու և տարածելու համար: Եթէ՝ պատահմամբ՝ խօլերային սաղմը մըտ-նումէ մի անհատի մարսողական գործարանները! Կհիւանդանայ միայն այս անհատը, բայց երբէք համաձարակում չի լինիլ. մա-նաւանդ՝ եթէ ուշ գարձնենք այն բանի վրայ, որ՝ ինչպէս ապա-ցուցել է այս կօխը՝ Ներելը կամ հարելը առջել+ է վնասմ սպազ-վագանման բացիկն անելուն: Ինչ որ նպաստումէ սրա զարգանա-լուն, այդ հողի ծակոտութիւնն է և ստորերկրեայ ջրի մակերե-ւոյթի բարձրութիւնը, որի նուազ կամ աւելի լինելուց կախւած է մանրակենցաղների (Ֆեռօքների) աճելութիւնը: Այսպէս է մեկ-նում՝ գոնեայ՝ հոչակաւոր Պետուեն կոփերը, որի հետ համաձայն են միւս ուսումնականները:

Ի հարկէ հողը ինքը պէտք է շորային բնոյթ ունենայ: Ուրիշ  
տեղական պայմաններ անցայտ են: Պատութիւնից սպան գի-  
տենք միայն, որ զանազան համաճարակումների ժամանակ եղել են  
տեղեր, որոնք չեն ճարակւել. ինչպէս այս հաստատած է ֆրան-  
սիայի Ախօն քաղաքի համար, և խոպիայում Ախդուրիս գաւառի  
Նիավարիի համար: Բոլոր համաճարակումների ժամանակ խօսերը  
տարածւում էր Նիավարիի շուրջը, բայց իւր մէջը չէր մոնում:  
Եթէ պատահել է խօսերով հիւանդացողներին գալ այդտեղ, նրանք  
մնացել են միայնակ հիւանդներ, և ուրիշները չեն վարակւել:  
Նոյնը հինաւուրց ծերունիները վկայում են և մեր էջմիածնի  
համար:

Խոլերային սաղմը՝ երբ որ աճեց և բազմացաւ մի տեղում  
գեռ ևս համարակումն չի պատճառիլ, մի երկրում ախտ տա-  
րածւելու համար հարկաւոր է նաև նպաստաւոք ճանապարհներ:  
Մինչեւ այժմ իբրև յարմար ճանապարհներ ընդունել են օդը և  
ջուրը, բայց վերջին ժամանակներս կօխը հաստատեց, որ օդը  
չէ կարող տարածող միջոց լինել: Եթէ օգով այդ ախտը տեղա-  
փոխւի էլ, այն էլ մի փոքր տարածութեան վերայ կլինի:

Ընդհակառակը ջուրը խօսեր տարածելու ամենալաւ ճանապարհն է: Ինչպէս այս հաստատումէ վերջին ժամանակները խօ-

լերի տարածելը ջենովայում։ Հետազօտութիւնը ցոյց տուեց, որ խօլերի սաղմը ընկել էր ջրաբաշխ խողովակների մէջ, որոնցից բնակիչները ջուր խմելով վարակւել են։

Կօխը իւր ջնդկաստանում եղած ժամանակ մի կեղտակալած լճակի մէջ գտել էր ստորակէտանման բացիլ։ Այս լճակի ափերում կենումէին հնդիկներ, որոնք օգտումէին այդ ջրից իւրեանց բոլոր կարիքների համար. այդ ժամանակ էլ նրանք հիւանդնումէին. երբ խօլերը նուազումէր այստեղ, նուազումէր և լճակի ջրի մէջ խօլերի բացիլը։ Կօխը ասումէ թէ այս փառտի վերայ ուշ դարձնենք, շատ աղէտներից հեռու կըլինենք։

### ՍԱԿՈՅՆ ԻՆՉՊԼՅ Է ՎԱՐԾԿԻՈՒՄ ՄԱՐԴՈ.

Ջուրը և ամենայն ինչ, որ մոցնումէնք մեր մարսողական գործարանները, բաց առնելով թթու հեղուկները, որոնց մէջ խօլերի բացիլը ընդունակ չէ ապրելու, կարող են միշտ վարակել մեղ, եթէ ինքը պարունակումէ իւր մէջ վարականիւթ. այս դէպքում մարդուն ապականումէ այն՝ ինչ որ բերանով ներս է մտնում, և ոչ այն՝ ինչ որ գուրս է գալիս բերանից։

Որպէս զի վարականիւթը իւր մահառիթ ազգեցութիւնը ունենայ, պէտք է որ նա մոցնւի անպատճառ բարակ աղիքները և ոչ ստամոքսը, որովհետեւ, ինչպէս կօխը ապացուցելէ, ստամոքսի հիւթը, իբրև թթու հեղուկ, սպանումէ խօլերի բացիկներին։ Եթէ միայն ստամոքսը առողջ է և արտադրուումէ կանոնաւոր հիւթ։ Այս դէպքում խօլերի բացիլը մարտումէ։

Ուրեմն եթէ պատահեց, որ թէ խմիչքների և թէ ուտելեղէնի հետ խօլերի վարականիւթը մտնի ստամոքսը, նա այն ժամանակ միայն կարող է անց կենոյ աղիքները, երբ ստամոքսի հիւթը կորցնելով իւր թթութիւնը դարձել է շորային կամ չեղոք։ Այս է պատճառը, որ եթէ առողջ մարդը հիւանդանումէ խօլե-

րով, նա՝ անշուշտ՝ հիւանդանալուց առաջ պահեցողութեան դէմ անկարգութիւն է արել։ Կարճ կտրելով խօսքը՝ առողջ ստամոքսը ունեցող մարդը երբէք չէ կարող հիւանդանալ խօլերով։ Եթէ այս կէտի վերայ ուշ դարձնենք, շատ աղէտներից հեռու կըլինենք։

Նախիրնթաց դատովութիւնների հիման վրայ՝ մենք կարող ենք ասել թէ՝ եթէ մէկը հայունայ յեւ-ուուն էամ մարմար կույսով հիւանդանու հիւանդնուն, նա դրանով չէ վարակուի և չէ հանդանու խօսւով։ Այս կէտի արժանի է մեծ ուշագրութեան։

Ի հարկէ հետաքրքիր է իմանալ թէ Բնչից են յառաջանում խօլերի զանազան երևոյթները կամ Բնչու ամեն խօլերով հիւանդացող միւնցն պատկերը չէ ներկայացնում։

Որովհետեւ մենք վերև ասացինք թէ՝ ստորակէտանման բացիլը գտնըւումէ միայն աղիքների արտաթորութիւններում, աղիքների պատերում և գեղձերում, իսկ միւս գործարաններում և արիւնի մէջ չեն լինում։ Կարելի չէ թոյլ տալ որ՝ մի կէտի վերայ ազգելով խօլերի բացիլները յառաջացնէին ամբողջ մարմնու մէջ այնպիսի փոփոխութիւններ ինչ որ տեսանք վերևի նկարագրութիւնից։ Գիտութիւնը ցոյց է տալիս, որ այս բացիլները մի ինչ որ նիւթ են արտագրում աղիքներում, որը այստեղից տարածւումէ մարմնու մէջ և զանազան գործարաններում։ այնպէս որ բացիլների այս արտագրած նիւթը կարելի է այդ գործարաններից ստարացների այս արտագրած նիւթը կարելի է այդ գործարաններից ստարացների արտագրութիւններից, իսկ երկրորդը ներքին գործարաններից հանել են մի նիւթ, որը սրսկելով կենդանիների կաշու տակ յառաջացնել խօլերի երևոյթները։ Այսպիսի թոյները, որոնք պատրաստումեն մարդու երևոյթները։ Այսպիսի թոյները, որոնք պատրաստումեն մարդու ներսում մանրակաղմների ազգեցութեան տակ կոչւումեն պտօմայիններ։ իսկ խօլեր յառաջացնող պտօմայինը կոչւումէ խօլերի պտօմային։ Այս տեսութիւնը ընդունելով կարելի է հասկանալ թէ՝ Բնչու խօլերը մի դէպքում կարճ է կտրում միւս գէպքում դանդաղ է ընթանում, մի դէպքում կարճ է կտրում միւս գէպքում դժուար ու ծանր է լինում։ Մենք ասաքում թէթև, միւս գէպքում դժուար ու ծանր է լինում։ Մենք ասաքում թէթև, որ աղիքներում ստորակէտանման բացիլ-բանուորները պատրաստում ցինք, որ աղիքներում ստորակէտանման բացիլ-բանուորները պատրաստում կամ երեն խօլերի պտօմային, որը կարող է շուտ և շատ պատրաստւել։ Կամ երեն խօլերի պտօմային, որը կարող է շուտ և շատ պատրաստւել։ Եւ այս կար ժամանակում շատ պատրաստւել կամ քիչ պատրաստւել։ Եւ այս նրա համար, որ ինչպէս վերևը յիշեցինք հոտելը կամ նեխելը արդելք է լինում բացիլների զարգանալուն։ Ուստի և խօլերի պտօմայինի քանա-

կութիւնը կախւած կլինի աղիքներում եղած նեխութեան աստիճանի շատ  
ու քիչութիւնից, նոկ խօլերի պտօմայինի շատ ու քիչութեան հետ կապ-  
ւած է հիւանդութեան երևոյթների թեթև ու ծանրութիւնը:

Զ.

ՆԱԽԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅՆԵՐԸ.

Վերեկ բացատրութիւնից հասկանալի է խօլերի հիւանդութեան  
դժուար բժշկւելը. շատ անգամ էլ այս ախտը ժամանակ չէ տա-  
լիս բժշկւելու: Ուստի հանգամանքները ստիպում են մեզ զիմել  
այնպիսի միջոցների, որսնցով կարելի է հիւանդանալու առաջը  
առնել: Որո՞նք են այս միջոցները: Ինչպէս վերելը ասացինք՝ այս  
ախտը բերւում է մեզ մօտ գլխաւորապէս Հնդկաստանից կամ  
մեզ սահմանակից երկրներից, որոնք նոյնպէս Հնդկաստանի են  
վարակւում: Ուրեմն երբ մեր սահմանակից երկրներում խօլերի  
համաճարակումն է լինում այն ժամանակ պէտք է զգուշութիւն  
գործ գրւի, որ մեզ մօտ քերւի այդ ախտը: Այդ զգուշութիւ-  
նը կայսնում է նրանում: որ սահմանագլխներում կարգում են  
այսպէս ասած՝ կարանտիններ, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր  
քառասունը: Ինչպէս ծննդկան կնոջ արգելում է 40 օր գուրս  
գալ տանից, որ մի հիւանդութիւն չյառաջանայ, այնպէս էլ՝ մեր  
սահմանակից երկրների մէջ համաճարակում եղած ժամանակ՝ ար-  
գելք է գրւում և պէտք է գրւի եկողների վերայ, թէ առողջ և  
թէ հիւանդ լինին նրանք: Առողջներին պահում են այնքան ժա-  
մանակ, որքան հարկաւոր է հիւանդութիւնը ծածուկ վիճակից  
յայտնի գառնալու այսինքն 3—4 օր, իսկ հիւանդներին պահում  
են մինչև իրանց առողջանալը: Երբ հիւանդը առողջանում է, ի-  
րան պատկանած բոլոր իրեղենները պէտք է մաքրվի, ենթարկե-  
լով այնպիսի նիւթերի ազգեցութեան, որոնք ոչնչացնում են վա-  
րակիչ յատկութիւնը. այս նիւթերը կոչւում են վարակաջնջ (զէ-  
զինփէկցիական) նիւթեր, որոնց մասին նեքելը կիսուուի: Երբ խօլե-  
րը սպրզելով մտնում է մեր երկրը, այն ժամանակ պէտք է ուշ  
դարձնել այնտեղի վերայ, ուր նա երևացել է: Հիւանդներին հար-

կաւոր է խնամնել իւր հիւանդացած տեղում՝ և նրա արտաթո-  
րութիւնները և շորերը ինչպէս և սպիտակեղէնը վարակաջնջիլ  
այսինքն ոչնչացնել վարակիչ հիւանդութիւնը նրանց մէջ: Հիւան-  
դի կղկղանքը և վախածը պէտք է անողատնառ ընդունել մի ա-  
ռանձին ամանում որի մէջ ածած պէտք է լինի նախապէտ վա-  
րակաջնջ, նիւթեր: Հիւանդի խնամատարները զգոյշ պէտք է կե-  
նան սպահեցողութեան մէջ, հիւանդի սենեկակում ոչ պէտք է ու-  
տեն և ոչ խմեն: Հիւանդի հետ՝ բացի նրա իմաստարներից ոչ  
ոք յարաբերութիւն պէտք չէ ունենայ: Առհասարակ ամենքը ուր  
խօլերը երեացել է, ամենականոնաւոր կետնը պէտք է վարեն: Ով  
թոյլ ստամոքս ունի, նա ենթարկելում վարակելու վրանդի:  
ուստի այդպիսիները պէտք է մտնեն բժշկի հսկողութեան տակ՝  
քանի որ համաճարակում ուելում պատահ և նեխած մրգեցե-  
նից, կանաչեղէնից և այլ սննդական նիւթերից պէտք է հեռու  
կենալ:

Հիւանդի բնականնը ինչպէս և անկողնի պարագաները պէտք  
է վարակաջնջել, թէ հիւանդամալուց առաջ և թէ յետոյ: Հի-  
ւանդի սենեկակում բացի իւր անկողնից և անհրաժեշտ կահիա-  
րասիրից աւելրդի բան չպէտք է լինի:

Վերեկ յիշեցինք վարակաջնջելու մասին, բայց ոչինչ չառացինք  
թէ ինչ նիւթեր և ինչպէս պէտք է գործադրուի: Ուստի այստեղ  
գնում ենք համառօտ տեղեկութիւն վարակաջնջնից նիւթերի և վա-  
րակաջնջելու վերաբերութեամբ: Գյխաւոր վարակաջնջ նիւթերը  
հետեւալները են՝ աղային թթւոյթ (соляная кислота), քացախի  
թթւոյթ (уксусная кислота), ծծմբային թթւոյթ (сърная кисло-  
та), սուլէյմանի (сульфат), կարբուլի թթւոյթ (карболовая кис-  
лота), չոր խլորացինի (суходой хлористый цинк), պղնձի արջասպ  
(мѣдный купоросъ) և երկաթի արջասպ (желѣзный купоросъ):  
Այս նիւթերից պատրաստում են այնպիսի խոսնուրդ, որ երկար  
ժամանակ թթւու յատկութիւն ունենայ, և այդ խոսնուրդով վա-  
րակաջնջում են, որովհետեւ խօլերի բացիլները ընդունակ չեն  
թթւու հեղուկների մէջ ապրելու: Բացի այս նիւթերից կայ և  
այլ միջոց, որ աւելի մատչելի է. այն է եռացնելը և տաք գոլորշին,

որին ոչ մի տեսակ բացիլ չէ գիմանում: Համաձարակումի ժամանակ պէտք է աշխատել ոչնչացնել վարականիւթը ամեն տեղ, որտեղ կասկածելի է և որտեղից կարելի է վարակւել:

1. Պէտք է վարակաջնջել կերակուրը. դրա համար պաշտեղւնը պէտք է եռման ջրով լուանալ և երկար ժամանակ տապակել կամ եփել:

2. Պէտք է վարակաջնջել ջուրը որը պէտք է նախապէս եռացնել և յետոյ գործադրել: Քամելլ այնպէս, ինչպէս մենք ենք քամում: Չէ կարող օգնել:

3. Պէտք է օդը վարակաջնջել. այս նպատակի համար հարկաւոր է հողմահարել սենեակը, բանալով լուսամուտները, վառելով բուխարիները: Հինւանդի սենեակում աւելի նպատակայարմար է բուխարի քանց երկաթի կամ պատի հնոցները:

4. Պէտք է վարակաջնջել արտաքնոցները և լուացաջրերը: Արա համար հարկաւոր է բոլոր ասպականութիւնները դուրս տանել քնակութիւնից հեռու աեղ, խառնել ջրախառն ծծմբային թթւոյթի կամ անմաքուր կարբօւն թթւոյթի հետ այնպէս որ անհետանայ հոտածութիւնը: Կարելի է խառնել և պղնձի արջասպի հետ արջասպի 4 մասը խառնել ասպականութեան 100 մասի հետ (և մի մասը՝ լուացաջրի 1000 մասի հետ):

5. Պէտք է վարակաջնջել նոր գոյացած կղկղանքը, որը հարկաւոր է խառնել ծծմբային կամ աղային թթւոյթների ջրախառնորդի (մի մաս թթւոյթ 2 մաս ջուր) հետ և թողնել ազգելու 6-ից մինչև 12 ժամ կամ կարբօւն թթւոյթի ջրախառնուրդի (5 մաս թթւոյթ 100 մաս ջուր) և թողնել ազգելու 2-ից մինչև 24 ժամ: Նոյնպէս կարելի է խառնել պղնձարջասպի և երկաթի արջասպի ջրախառնուրդի հետ (առաջինից մէկ, երկրորդից տասը մաս՝ 100 ջրին) թողնելով 24 ժամ ազգեցութեան տակ:

6. Այն բնակարանը որտեղ եղել է խօլերով հիւանդը, պէտք է վարակաջնջել. նրա պատերին առատօրէն սրսկելով կարբօւն ջրախառնուրդ (100-ին 5 մաս): Առականւած շորերը և անկողինը եթէ չնչին գին ունին պէտք է այրել, իսկ սպիտակեղէնը եփ տակ մօխրացրով և լուանալ հասարակ եռման ջրով: Որտեղ ա-

պականութիւնը կաթած կլինի, այնտեղ հարկաւոր է նոյնպէս լուանալ կարբօւնի ջրախառնուրդով:

7. Խմելու ջուրը, ջրաբաշխ խողովակները, քանքանները պէտք է հեռու պահել վարակւելուց, հսկողութեան տակ դնելով նըրանց:

Ե՞

ՀԻՒԱՆԴԻՆ ՍԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՍՑՆԵԼԸ ՄԻՒԶԵՒ ԲԺՇԿԻ ԳԱԼԸ.

Նախընթաց փորձերը ցոյց են տւել թէ՝ ինչ միշոցներ օգնում են խօլերի երեսոյթները թեթևացնելու:

Նախ՝ երբ սկսում է փորլուծութիւնը հարկաւոր է փորի վերայ գնել տաքացրած աղ, մախիր կամ մանանեխ. յետոյ պէտք է խմացնել թէյ և սուրջ կօնեակոլ կամ չամի արալով (եթէ կայ): Դեղերից եթէ ձեռքի տակ լինի, տալ ինօգեմցեվի կամ բօտկինի կաթիլներ 20-ական կաթիլ ամեն 1—2 ժամ: Փսխելուն կարելի է օգնել սաւուցի կտորներ կուլ տալովը: Ծարաւը կոտրելու համար հարկաւոր է տալ սաւուցի, լաւ հին գինի և եփ տւած սաւոցրած ջուր, որը պէտք է կում կում խմել: Երբ որ ցնցումներ է լինում մարմինը պէտք է տրորել քեափուրի կամ մանանեխի սպիրուով: Ոտերը տաքացնել բութէլների մէջ ածած տաք ջրով. նոյնպէս տաք ջրի մէջ նստացնել: Խսկ ուժը պահպանելու համար հարկաւոր է տալ հին գինի, արաղ. և եթէ լինի ձեռքի տաք վալերեանի և չոփմանի կաթիլներ 20-ական կաթիլ ամեն 2 ժամ:

(Յօգւածը կազմած է գլխաւորապէս պրօֆեսոր Մարիլեանօի դասախոսութիւնով):

•Ծանօթութիւն: Յօգւածը շարւած էր, երբ լուր տարածւեցաւ թէ՝ հրամայւած է մրգեղէն շվաճառել և մինչեւ անգամ բոստանները քանդել: Այս պատճառով անհրաժեշտ է նկատել, որ թթու մրգեղէնը ուղղակի խօլերի բացիլներին սպանումէ և արգելք է լինում հիւանդութեան տարածւելուն, ուրիշ թարմ մրգեղէնները ինչպէս և բոստանների պտուղները երբէք մինչև այժմ խօլեր չեն յառաջացրել: Ուստի արգելք գնել այդ-

նիւթերի (երկիրը այդ է արտադրում) առուտուրին, ասել է թէ՝ զրկել մեր ժողովրդին ապրուստի միջոցից, որ հակառակ է առողջապահութեան գլխաւոր կանոնին. այն է առողջ լինելու համար հարկաւոր է կանոնաւոր սնունդ։ Գլուխոր ուշադրութիւնը պէտք է դարձնել այն հանդամանիքի վերայ, որ ջրերը չմարտկեն թէ խմելու ջորը, թէ դետերի, և թէ առուների ջրերը, արդեւ լով որ ոչ մի կասկածելի բան չւանան այդ ջրերամ, ինչպէս որ վարակաշնչած չէ նահապէս, որովհետեւ հիւմանդութեան տարածողը գտրի է,

ԲԱԺԱՆՎՈՒՄԵ ՁՐ

2945

Դեկ

ԲԱԺԱՆԻՈՒՄ Է ԶՐԿ

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0073925

